



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891. 81

4-29

Lucy

635

1

243  
g

2009



28

815

Պ. 2

ԲՈՒԼՂԱՐ  
ԱԿԱԶԱԿԱՊԵՏ



591.81  
4-29

N243

635

ԹՈՒՂԱՐ ԱԻԱԶԱԿԱՊԵՏ

(ԼԻՒԲԵՆ ԿԱՐԱՎԵԼՈՎԻՑ):

Ա.

Չը հաւատուիք, եղբայրներս, սոքա դարդակ  
բաներ են. կեանքումն ես շատ եմ տեսել այդ  
տեսակ Խաղը-Հի-ճայռներ և Խաղը-Շետք-  
ներ, և զիփ էլ ի զուր ի զուր են դրուս եկել:  
Այո՛, բոլորովին ի զուր: Ճապա հարցրէք ինձ  
թէ ինչո՞ւ եմ թողել իմ պառաւ, հիւանդ մօ-  
րս, իմ ծիրացած, լուսնի պէս սպիտակացած  
հօրս: Ո՞հ, որդիներս, գժուար ու դառն է,  
երբ մարդ մտաբերում է իւր երիտասարդու-  
թեան բաղդաւոր օրերը, այն ոսկի ժամանակ-  
ները, որոնք անցել են հայրենի յարկի տակ:  
Խոկ այժմն . . . : Այժմ, աքսորականի նման

1



(395 թ - 84)  
635-2009

635

թափառում եմ պանդխտութեան մէջ, և ոչ  
մի տեղ չկ' դտնում ոչ շանդիստ և ոչ խա-  
ղաղութիւն։ Եհա՛ արդէն մի քանի տարի է  
դուք ինձ հետ աւազակութեամբ էք պարա-  
պում դուք ինձ ձեզ գլխաւոր ընտրեցիք, բայց  
մինչեւ հիմա մի անդամ էլ դեռ չէք հարցրել  
թէ ևս ովլ եմ, ում որդին եմ, և կամ ի՞նչ  
պատճառով եմ ընտրել այդ պարապմունքը—  
ասումէր ծեր աւազակապետը իւր ընկերնե-  
րին։

— Պատմի՛ր, Ատօէն, պատմի՛ր, միաձայն ա-  
զաղակեցին շրջապատող աւազակները։ Եւ  
Ատօէնը մատով նշան արաւ որ ամենքը նրա-  
տեն և ականջ դնեն։ Նոքա նստեցին կրակի  
շուրջը և տիրեց խորին լուսթիւն։

— Ի՞նչ պէտք է արած, եղբայրնե՛րս, ասաց  
Ատօէնը և նստեց նոցա մէջ։ Երբոր ցանկա-  
նում էք իմանալ, ուրեմն լսեցէք։ Եյս ասե-  
լով քաշեց նա դիմի գդակը մինչեւ աչքերը,  
հանեց փոքրիկ վարժիր, նո-նո-նով լիցրեց,  
մեծ մատով պինդ ձևաեց, վերցրեց կրակից մի  
խանձող ծուխը քաշեց թոքերի մէջ և սկսեց։

Ես, եղբայրնե՛րս, Մաչկա<sup>1)</sup> գիւղից եմ։ Մէք  
ընդ ամենը երեք եղբայր էինք, որոնցից երկու-  
սը վաղուց արդէն չկան այս աշխարհում։ Ես-  
տուած նոցա հոգին լուսաւորէ։ Տարիքով ևս  
ամենից փոքրն էի. մեծ եղբայրս անուանուում  
էր Պրօդան, իսկ միջնակը Պրիվան։ Պրօդանը  
բոլորովին նշան էր մեր հանգուցեալ մօրը, ո-  
րը հէնց այդ պատճառով էլ նորան ամենից  
շատ էր սիրում։ Նա միշտ մօրս հետ էր լի-  
նում, տան բաներն էր տեսնում, ցանում էր,  
աշխատում էր պարտիզումը և այգումը։ Իսկ  
ինչպէս երիտասարդ, նա՝ մի խօսքով ծաղիկ  
էր. երբ տօն օրերին հագնուում էր, աչք էր  
պիտում որ մատիկ տար նորա վրայ։ Կիւրակէ  
տուաւոտները, կանուխ, գեռ աքլորը չկանչած,  
վեր էր կինում, կօշիկները սրբում էր ու հա-  
յելու նման փայլեցնում. հագնում էր սպի-  
տակ նեղ շալաչը, նախշուն շապիկը, որի  
վիզը և ձեռները զարդարուած էին լինում  
կարմիր, կապոյտ, կանաչ գեղին և սեւ մետա-

1) Մաչկան մի փոքրիկ գիւղ է, Սօֆիոյից ոչ հեռու։

քսեայ նախշերով. գնում էր նոր մորթեայ գը-  
դակը. կապում էր սպիտակ գօտին. ոլորում  
էր սեւ սաթի պէս բէխերը և գնում էր եկե-  
ղեցի Աստծուն աղօթք անելու։ Խոկ երբոր ե-  
կեղեցոց դուրս էր գալիս, ջահիլ ու պառաւ  
դիմ կանգնում ու նորան էին մտիկ տալիս։  
Պառաւ կնանիք, ծեր մսրդիկ, աղջիկները, կա-  
նայք և երիտասարդները, ամենքը զուարձանում  
էին նորանով։ Տղամարդիկ գլուխ էին տալիս  
նորան և ասում — բարի լոյս, Պրօդան։ — Ես-  
տուծու բարին, պատասխանում էր նա և շա-  
րունակում իւր Ճանապարհը։ Հալեւորները  
մատով էին նշանց տալի նորա վրայ և ասում  
իրանց դաւակներին. տեսէ՞ք, որդինե՞րս, դուք  
էլ Պրօդանի պէս լաւ, աշխատասէր և բարի  
եղէք։ Եւ այս ասելով, սրտանց հառաչ էին  
քաշում և բացագանցում — երանի՛ այն մօր՝  
որ ծնել է նորան, և հօր՝ որ նորա նման որ-  
դի ունի։ Անայք, պառաւները, երիտասարդ  
աղջկերքը շատ անգամ իրար ցոյց տալով, ա-  
սում էին. տե՛ս, տե՛ս, ի՞նչ տղայ ունի Տրէն  
ապէրը, հէնց կարծես երկնային շաղլինի։ Խոկ

նա գնում էր իւր Ճանապարհը, գնում էր և  
կարծես չէր լսում թէ այդ ամենը իւր մասին  
ևս ասում միայն բեխերի տակից մէկ մէկ քաղցր  
ժպիտ էր արձակում։ Ճշմարիտը ասած, ևս էլ  
չեմ իմանում թէ ինչո՞ւ. միայն թէ ամբողջ  
գիւղը սիրում էր նորան. աղջկերքը և կալքից դը-  
նում էին նորա համար. կանայք նայում ու  
զուարձանում էին նորանով. խոկ երիտասարդ-  
ները պատուում ու յարգում էին նորան։ Նա նո-  
ցա խորհուրդներ էլ էր տալիս, հարկաւոր եղած  
ժամանակ օգնում էլ էր նոյա։ Պանում էր  
տուն, ճաշ էր ուտում, և խոկյն էլի դուրս  
էր գալիս կամ եղներին մտիկ տալու, կամ  
ձիերին, կամ խոտին կամ հաւերին. վերջա-  
պէս, մի խօսքով, ամեն տեղ և ամեն գործում  
անպատճառ նա պէտք է իւր ձեռքով իւր գոր-  
ծը տեսնէր։ Եյն էլ ասեմ, որ նորա պէս երի-  
տասարդ գժուար թէ գուք մէկ էլ տեսնէք այս  
աշխարհում։ Հայրս, որ նոյն խոկ ծերութեան  
օրերում շատ աշխատասէր էր, յաճախ ասում  
էր նորան — Պրօդան, բաւական է ընկնես այդ  
քունջ ու բուջախը, այդ հաւերի ու սագերի,

այդ կաղամբի ու բողի ետեւից. Հանգստացիր»  
որդեակ, թող մի քիչ էլ «Պրիվանը և Ստոէնը  
աշխատեն: Իսկ «Պրօդանը ձեռքը շարժում էր  
և ասում. — է՛շ, հայրիկ, միթէ դա էլ աշ-  
խատանք է: Մի խօսքով, նա չէր կարող մի  
րոպէ էլ առանց գործի մնալ, և հանգստանում՝  
էր միայն այն ժամանակ՝ երբ քնած էր լինում:  
Ի՞այց մէկ էլ յանկարծ «Պրօդանը սկսեց փո-  
խուել և քիչ ժամանակում համարեա բոլորո-  
վին փոխուեց: Ի՞ոլոր ժամանակը խորասու-  
զուում էր մտածութեան մէջ. չէր ուտում,  
չէր խմում, չէր երգում. քաշուում էր արտը և  
զոււիր ձեռքերի մէջ ծածկած տիսուր ու տրը-  
տում հայուածքը ձգում էր հեռու հեռու հո-  
րիդոնի վրայ, և կամ թէ երկար քնում էր,  
ման էր գալիս բոլորովին գոյնը ձգած, ամբողջ  
ժամանակը հառաջում էր և ոչինչ չէր շինում:  
— «Պրօդան, որդի՛ս, ի՞նչ կայ, ի՞նչդ է ցա-  
ւում, հարցնում էր մայրս:

— Ոչի՞նչ մայրի՛կ, ոչ մի տեղս չէ ցաւում՝  
ասում էր նա և դարձեալ խորը սրտից հառաջում:  
Իսկ մայրս նորա վրայ նայելով անդադար

լաց էր լինում և արտասուքը վազում էին  
նորա ծերացած աչերից:

Մի երեկոյ երբ «Պրօդանը դուրս է գալիս  
փողոց, «Պրիվանն էլ կամաց կամաց գնում է  
նորա ետեւից, ցանկանալով իմանալ թէ՛ ուր  
է շտապում նա այդպիսի ուշ ժամանակ: «Պրօ-  
դանը վերջապէս կանգ է առնում ծերունի  
Ալնչայի ցանկապատի տակ: Ալնչան մի սիրուն  
աղջիկ ունէր Լատինկայ անունով. մի շատ  
սիրուն արարած. սեւ, կրակոտ աչերով, գեղե-  
ցիկ հասակով, աննման դէմքով, մի կինդանի,  
վառվուուն և համեստ աղջիկ: «Կիշերը մութն  
էր և թանձր խաւարը ախրապետում էր չորս  
կողմը: «Պրիվանը ականջը պատին դէմ տուած  
լսում է: Մէկ էլ յանկարծ Լատինկան դուրս  
է գալիս լորձիթից, կանգնում է, նայում է  
չորս բոլորը և դիմում է դէպի այն կողմը,  
ուր «Պրօդանը սպասում էր նորան: «Պրիվանը  
այսքանը միայն կարողանում է լսել:

— Նը, ի՞նչ է, Լատինկայ, մայրիկիս ու-  
ղարկեմ քեզ նշան դնելու. ևս արդէն պատ-  
րասաել եմ քսան հատ ոսկի. առել եմ վերէ-

ներ<sup>1</sup>), սպասում եմ միայն քո պատասխանին. ուղարկեմ, թէ ոչ:

— Ուղարկե՞ր, Պրօդան, ուղարկե՞ր, պատասխանում է աղջիկը:

— Իսկ հասանը. չէ՞ որ նա սիրում է քեզ. ես վախճանում եմ նորանից. նա կարող է վնաս հացնել ինձ:

— հասանը . . . վնաս . . . կրկնումէ Լատինկան և կտաւի պէս զոյնը թռցնելով, լռում է. փոքր ինչ անցնելուց յետոյ, նա կրկին վըրայ է բերում. ուղարկե՞ր, Պրօդան, ուղարկե՞ր, ինչ որ Վատուած նշանակել է՝ այն էլ կը լինի. իսկ ինչ որ պէտք է լինի՝ նորանից փախչել չես կարող:

«Նոքա էլի մի քանի բան են ասում, բայց Պրիվանը չէ կարողանում լսել. նա տեսնում է միայն որ Լատինկան Պրօդանին տուեց մի փունջ, որը Պրօդանը առաւ, համբուրեց, թաքցրեց կոնատակին և ձանապարհ ընկաւ դէպի տուն:



1) «Զեիլի» մի տեսակ հողաթափ է:

Բ.

Ես մի քանի օրուայ համար գնացել էի քաղաք ցորեն ծախելու: Երբոր վերադարձայ տուն, Պրօդանին նշանեցին, նշանդրէքը կատարեցին. իսկ հարսանիքը կամենում էին անել երկու շաբաթից վերջը, տօներից յետոյ: Պրէնչէների<sup>1</sup>) ժամանակ էր. տօներից յետոյ ամենքը դարձեալ գնացին իրենց գործերին. Պրիվանն էլ գնաց այդին. այն տեղ նորան հանդիպում է հասանը: հասանը մեր գիւղի պահապանն էր, ազգով Առնավուտ և չափագանց արբեցող խմելու համար նա ծախել էր իւր բոլոր ունեցած չունեցածը, մինչեւ անգամ իւր հագուստը. նորա վրայ մնացել էր միայն պատառոտած շապիկը, մի հին երկայն հրացան, դաշոյն և ուրիշ ոչինչ: Բայց նա ուղղափառ Մահմէտական էր և գիտէր որ ամեն տեղ և ամեն ժամանակ դժուար չպիտի

1) Բուլղարների մօտ այսպէս անուանուում է Յուլիս ամստւան երրորդ քառամսեակը, երբ վախճնալով կայծակից և չութիւնից ո՛չ ոք չէ տշխատում:

լինէր նորան իւր սնունդը հայթայթել: Մուռ-  
սուլման լինէր հանաք չէ: ‘Նա մօտենում է  
Պրիվանին, նստում է այգու առուի մօտ և  
բարձր ձայնով կանչում է — «ԷՇ գետը-ը, ե՞կ  
այստեղ» :

Պրիվանը թողնում է մանգաղը, որով կրտ-  
րատում էր խաղողի որթերը. մօտենում է նո-  
րան և հարցնում է — «ի՞նչ է հարկաւոր  
քեզ ձասան» :

— ԷՇ, ա՛խմախ, գնա՛, ասա՛ Պրօդանին որ  
Լատինկայի վրայ չպասկուի. միթէ չէ՝ իմա-  
նում որ նա իմ նշանածն է. թէ չէ՝ երգուում  
եմ Ալլահով, նորա գլուխը կը ջախջախեմ. մի-  
թէ նա չէ՝ իմանում որ ես կամենում եմ վեր-  
ցընել Լատինկային և տանել իմ հայրենիքը.  
թող նա միտը բերի որ ես Օսմանլի եմ, իսկ  
ինքը գետը-ը:

— Ի՞նչ անենք որ դու Օսմանլի ես, դու  
գիտես որ Խանին-է-ճայուն է դուրս եկել և  
այժմ արդէն Եանդիման (Հաւասարութիւն) է:  
— Խանդիման, ասում է ձասանը և թը-  
քում. Եանդիման . . . բայց դու իմանում ես, ա-

նիծեալ գետը-ը թէ ի՞նչ է Եանդիմանը: Ճէց  
այդ Եանդիմանն է, որ ձեզ պէս յիմարներին  
ջարգում սպանում, կողոպառում է: ‘Նա ձեզ  
երբէք չի պաշտպանիլ. ոչ դուք շատ յոյս մի  
դնէք նորա վրայ. դուք ինքներդ շատ լաւ եք  
իմանում որ հաւասարութիւն երբէք չէ կա-  
րող լինիլ Քրիստոնէի և Մահմէտականի մէջ.  
հաւասարութիւնը դարդակ բան, դարդակ  
խօսք է: Դուք ի՞նչ կարող եք անել ինձ ձեզ  
Խանին-է-ճայունով: Խուրքը միշտ կարող է  
պաշտպանութիւն գտնել վաշայի ու դատա-  
ւորի մօտ. իսկ դուք շատ մեծ պաշտպանու-  
թիւն կարող եք գտնել այդ Խանին-է-ճայու-  
նի, այդ դարդակ թղթի կառի մէջ: Ես ձեզ  
խորհուրդ կը տայի նրանով ծածկել ձեզ պա-  
տուհանները. նա ոչ ոքի ոչինչ օգուտ չէ կա-  
րող բերել, բայց մանրավաճառներից, որոնք  
կարող են մի բան վաթաթել նորա մէջ: Խոկ  
դուք, յիմար Պրիվան, շատ յոյս մի դնէք  
նորա վրայ. այդ շատ դարդակ յոյս է: Պր-  
տե՞ս, ի՞նչ է ասում Խորքի առածը — գետը-ը

Դեմիան, Օսմանը դավուց՝ քրիստոնէի կաշխատը թրքի թմբուկ է:

— Գիտեմ, պատասխանում է Պրիվանը, քայլ գուք շատ երկար չէք թմբկահարիլ մեր կաշուի վրայ։ շուտով, շատ շուտով կը հասնի այն ժամանակը ելք, գիտե՞ս ինչ կը լինի, ձաւան թմբուկները կը շինին Տուառ-լճանների կաշխներից և մենք էլ կսկսենք Մուհամեդի մարզը։ Եյն ժամանակ էլ մենք կ'ասենք մեր Բուլղարական առածը.

«Տար հոգի, համբերի՛ր կաշի, կար ժամանակ որ դու ուրբաթ օրերն էլ միս էիր ուտում . . . :

— Հաւանում ես, ձաւան, այս առաջին լնչութեցիր. երեւում է դուք չեկաւ։ Լսի՛ր, ձաւան, եթէ չես հաւատում, հարցրու քո Մուլաներին. նոքա գիտեն որ իրենց զրքերում զրած է թէ . . . :

— Լսի՛ր, Քեմ վո՞ր, լսի՛ր, թէ չէ Ալլահը վրայ, զլուխդ կը կտրեմ. զնա՛, զնա՛ և մի շարժիր մարդաժառ թղթի բարկութիւնը. զնա՛, ասա՛ Պրօդանին որ չհամարձակուի պսակուել

Լատինկայի վրայ. թէ չէ վայր եկել ու տարել է նորան։ Եյս ասելով ձասանը վերցնում է իւր հրացանը և Ալեանական երդը երգելով խորասուզուում է անտառի մէջ։

—○—

Գ.

Ենցել էր երեք շաբաթ Պրիվանի և ձասանի խօսակցութեան վրայից. մեք պսակում էինք Պրօդանին։ Երիտասարդ պսակուղներին եկեղեցուց դուրս բերին. ես իբրև փոքր եղբայր, խաչեղբայր էի կանգնած։ Լատինկան իւր պսակի հագուստի մէջ այնպէս սիրուն, այնպէս գեղեցիկ էր երեւում, որ ամենքը զարմացած հառաջներ էին արձակում։ «Օերունի Ալնչան մէնակ մի աղջիկ ուներ, և նորա վրայ էլ թափել էր իւր բոլոր հարստութիւնը։ Ոսկի ու արծաթ էր որ փայլում էր նորա մարմարեայ ձեռների և պարանոցի վրայ։ Պրօդանի հարսանիքը սկսեց։ ձարսանիքը իրաւ որ լաւ բան է. ամենքը երգում են, պար են գալիս,

ուրախանում են և մոռանում են իրենց վիշտը:  
Ակեսուրը, հանդիպում է թագաւոր—թագու-  
շուն բակի մէջ, խաղում է իւր որոշեալ պա-  
րը և հարցնում է տագրերին. — Ինձ համար  
ի՞նչ էք բերել որդինե՞րս:

— Քաջ փեսայ և համեստ հարս — պա-  
տասխանում են նորան:

— Իերաններդ ոսկի դառնայ, ասում է սկե-  
սուրը և դառնում է հարս բերող աղջկերանց  
— իսկ դուք ի՞նչ էք բերել սիրուն աղջիկներ:

— Երիտասարդ փեսայ, ոսկի ձեռներով (աշ-  
խատող). համեստ և խաղաղ հարս, մի խօս-  
քով մեղր ու կարագ, պատասխանում են աղ-  
ջկերքը:

— Աստուած բերաններնիցդ լսի. տայ Աս-  
տուած որ մի ձեռներդ միշտ եղումը լինի,  
միւսը մեղրումք:

Յետոյ դառնում է հարսին և նոյնպէս հար-  
ցընում է — իսկ դու ի՞նչ ես բերել իմ սի-  
րուն հարս:

— Քաղգաւորութիւն և քաջ զաւակներ,  
պատասխանում է հարսը:

— Միշտ բաղգաւոր և երջանիկ պահէ քեզ  
Աստուած, բարով արժանանաս թոռներից  
թոռներին:

։արով գլուխ է տալիս և համբուրում է  
սկեսրի ձեռքը. իսկ սկեսուրը պաշում է նորա  
ձակատը և թշերը: Արանից յետոյ նա դառ-  
նում է որդուն և հարցնում — իսկ դու ի՞նչ  
ես բերում, իմ աղի՞ղ որդիի:

— Քարեկամ, մայրիկ, բարեկամ, որ պիտի  
մասնակցէ մեր ուրախութեան ու վշտին, որ  
պիտի օգնէ մեզ ամեն տեղ և ամեն բանում,  
և ձնէ օգնական ու ժառանգ որդիներ:

— Աստուած լսող և կատարող լինի, որդի՝,  
ասում է սկեսուրը և դառնալով բոլոր հարս-  
նեւորներին հարցնում է նոցա — իսկ դուք  
բարի՛ մարդիկ, դուք ի՞նչ էք բերում ինձ հա-  
մար:

— Աստծու ողորմութիւնը պատասխա-  
նում են հարսնեւորները:

— Գուք ամենքդ երջանկութիւն ու բաղ-  
գաւորութիւն էք բերել իմ տունը. թող ու-  
րեմն Աստուած օրհնէ ձեղ ամենքիդ և կա-

տարե՛ ձեր սրտի իղձը. թող տայ Աստուած  
երիտասարդներին — սիրուն և համեստ հարա-  
նացուներ, օրիորդներին — աշխատասէր և  
եռանդու փեսայներ, պառաւներին — բա-  
րի և հնազանդ հարսեր, կանանց — բարե-  
սիրու ամուսիններ, տղամարդերին — բաղմա-  
թիւ արու գաւակներ, սրոնցից ամեն մէկը  
տասն և երկու որդիների տէր լինի, ամեն մի  
որդին էլ տասն և երկու թռուների. շատ և  
շատ շնորհակալ եմ ձեզանից. համեցէք ա-  
մենքդ էլ ներս. դուք ինձ համար երջանկու-  
թիւն էք բերել. Աստուած էլ ձեզ երջանիկ,  
ուրախ և բազգաւոր պահէ:

Սկսուայրը սպասումէ թագաւոր — թագու-  
հուն տան մէջ. մինչեւ սանդուխները գնում  
է նոցա առաջ, զբկումէ նոցա և հարցնում  
է իւր պառաւին:

— Ի՞նչ է, այ կնիկ, ի՞նչ են բերել մեզ հա-  
մար մեր ազան ու հարսը:

— Երջանկութիւն, երջանկութիւն, պա-  
տասխանումէ պառաւը:

Տղի հոյրը կրկին անդամ զրկումէ երիտա-  
սարդ ամոներին:


— Համեցէք, համեցէք, ասումէ նա. յե-  
տոյ գառնալով որդուն հարցնումէ:

— Իսկ դու, որդի, ի՞նչպիսի ընկեր ես ընտ-  
րելքեղ համար:

— Պառան պէս հանգարտ, մեղուի պէս աշ-  
խատասէր, սիրամարդի պէս սիրուն, սոխակի  
պէս քաղցրախօս, պատասխանումէ երիտա-  
սարդ նշանաձր:

— Աստուած շնու ու առատ պահէ ձեզ, ա-  
սումէ սկեպայրը և երրորդ անգամ զրկումէ  
նոցա: Յետոյ գառնալով հարսնեւորներին նոյն-  
պէս հրաւիրումէ. համեցէք, բարի՛ մարդիկ,  
համեցէք ամենքդ էլ ներս: Եյս հրաւէրի վր-  
բայ՝ կարգով մանում են տուն նախ՝ երիտա-  
սարդները, յետոյ հասակաւորները, և նստու-  
թով ուրախ ու զուարթ սկսում են կերու-  
խումբ:

Պրօդանի հարսանիքը տեսեց ամբողջ մի  
շաբաթ: Հարսանիքից յետոյ ամեն մէկը վե-  
րադարձաւ իւր գործին — որը այդին, որը ար-



տը և որն էլ խոտի: Պրօդանն և հարսն էլ գնացին հունձի: Մեր գիւղում պատկռւելուց յետոյ, հինգշաբթի օրը, նորապսակները գընում են աներանց տուն լուացքի. հարսը իւր հօր տանը գլուխը լուանում է:

Եյդպէս էլ Պրօդանը՝ հարսանիքից յետոյ, հինգշաբթի առաւօտ, վաղ վեր է կենում և ասումէ իւր ամուսնուն —այսօր, հոգի՛ս, պիտի գնանք մօրդ մօտ հիւր, բայց նախ վե՛ր առ մանգաղը և գնանք արտը փոքր ինչ հընձելու:

Լատինկան վազում և բերումէ երկու մանգաղը մէկը տալիս է Պրօդանին և կամացուկ ասում է, գնանք, հոգի՛ս, բայց ասա՛ տեսնեմ, ո՞վ պիտի պատրաստէ մեր տան իրերը:

— Մայրիկը, պատասխանում է Պրօդանը և գառնալով մօրս ասումէ. մայրի՛կ, դու գաթան պատրաստի՛ր, գինու ամանն էլ լեցրո՛ւ, պատրաստի՛ր նմանապէս մեղքը և պանիրը. իսկ դու, հոգեակս, հոգի՛ր նոր շորերդ և ձըգի՛ր դիսիդ այն թաշկինակը՝ որը հարսանիքի օրը տուի քեզ:

— Շատ բարի, որդի՛, շատ բարի, դուք գնացէ՛ք, ես բոլորը կը պատրաստեմ, պատասխանում է մայրս և համբուրում է նոցա երկուսին. նոքա էլ նորա ձեռն են համբուրում: Յետոյ Պրօդանը գառնալով՝ Պրիվանին և ինձ ասում է. իսկ դուք, եղբայրնե՛րս, շուտ արէք, գործներդ վերջացրէ՛ք և ճաշի ժամանակ պատրաստ եղէք, որ ամենքս միասին գընանք. այս ասելով նա իսկոյն դուրս է դալիս և հեռանում է իւր հարսի հետ միասին:

Եյդ տարին հունձը հրաշալի էր. ցորենը և վարսակը աճել էին զարմանալի առատութեամբ: Մարդիկն էլ կարծես սովորականից աւելի ուրախ էին: Մէկ էլ տեսնես խումբ խումբ հաւաքվում և խօսակցում էին իրար հետ: Եյս տարի Եստծու պարզեւը և առատութիւնը հրաշալի է: Մինչեւ անդամ ծերունի Տրէնոն, որ հարիւր տարուց աւելի էր ապրում, զարմանում էր և ասում, « տղե՛րք, ես ամբողջ կեանքում այդպիսի առատ տարի տեսած չեմ». և իսկապէս այդ տարուայ առատութիւնը մի ջոկ տեսակ առատութիւն \*

Էր. բոլոր դաշտը լիմննի պէս գեղնել էր. յուրենը, վարսակը, գարին, հաճարը, կորեկը պյնքան շատ էին, որ մարդ էր հարկաւոր որ արտից կրէ կալք: Ա՛հ, եղայլներ, եթէ իմանայիք ի՞նչքան ուրախ է լինում զիւղացին, երբ այդպիսի առատ հունձ է տեսնում և մտածում է թէ ի՞նչպէս անէ որ շուտով լիցնէ շաեմարանները հացով: Պրօդանը և Լատինկան հասնում են արտը. Պրօդանը հանում է վրայի զգեստը, փոռում է գետնի վրայ, դառնում է յետ և նայելով իւր հարսին առումէ... Գիտե՞ս, Լատինկա, ի՞նչքան ուրախ եմ լինում ես քեզ հետ. ինձ այնպէս է թուում թէ ողջ աշխարհում միայն ես ու գուն ենք ապրում:

— Իսկ ես, Պրօդան, այսօր շատ տխուր եմ և կարծես թէ մի բանից սարսափում եմ, բայց ինքս էլ չեմ իմանում թէ ինչից:

— Մի՞ վախիր ո՞չնչից, սիրուն թռչնակս, ինչո՞ւ համար պէտք է տխուր լինես, միթէ ես քեզ հետ չեմ, էլ ինչից կարող ես երկիւղ կրել:

— Խնքս էլ չեմ իմանում թէ ինչո՞ւ սիրոս ուրախ չէ, ասում է Լատինկան և նստում գետնի վրայ:

— Ոչի՞նչ, մի բան երդիր և ամեն ախրութիւն կանցնի:

Եւ Լատինկան սկսում է երգել.

Կանաչ թըրփերի ետեւից պայթեց

Ընյայտ սպանչի դաւաճան գրնդակ.

Գիշօն մերձ ի մահ գետին գրլորուեց  
Հանելով մահուան վերջին աղաղակ:

— Ո՛հ, դու արարիչ, Ըստուած զօրաւոր,  
Ո՞ւր է մայրիկը, ո՞ւր իմ ամուսին՝

Որոնք տեսնէին ինձ թաւալգըլոր

Լոռալուս իմ թուկս արեանը միջին.

Որոնք տեսնէին ինձ . . . . . :

Եյտել նա յանկարծ լոռում է, և տխուր, ամենատխուր հայուածքով նայում է Պրօդանի վրայ: Պրօդանը սարսափած ձգում է աչքերը իւր նազելի հարսի վրայ և մնում է սառած շուարած:

— Լսի՞ր, Պրօդան, ասում է Լատինկան,

փոքր ինչ լոելուց յետոյ, գիտե՞ս ի՞նչպիսի  
վատ երազ եմ տեսել այս դիշեր:  
— Ի՞նչ ես տեսել հոգեակս, հարցնում է  
**Պրօդանը:**

— Լոի՞ր, սի՞րելիս. ես հաց էի թխում և  
թխեցի մի շատ լաւ, սպիտակ հաց. իսկ մենք  
քեզ հետ միասին նստած էինք իրարու կող-  
քին և իբր թէ դդում էինք դրել եփերու և  
սպասում ենք եփուելուն. մէկ էլ յանկարծ եր-  
կու սեւ սարսափելի ագռաւ իջնում են  
երկնքից, խլում են հացը և թռչում: Խո վա-  
խեցայ, թագ եմ կենում քո ետեւում, բոլոր  
ձայնով գոռում եմ, բայց դու քնած ես: Մէկ  
էլ տեսնելով քեզ արիւնաշաղախ, ես աւելի  
սաստիկ գոռացի և զարթեցայ: Խճ այնպէս  
է թռուում, **Պրօդան**, որ այդ լաւ երաղ չէ.  
դու ի՞նչ ես կարծում: Նրազում հաց տեսնե-  
լու ասում են հիւանդութիւն է. իսկ ագռաւը  
նշանակում է որ մէկը պիտի մեռնէ:

**Պրօդանը** գոյնը նետում է, զլուխը քաշ է  
քցում և մի բոզէ մտածելուց յետոյ, խռով-  
ուած ձայնով ասում է, — երազը միշտ չէ կա-

տարուում, սի՞րելիս, մանաւանդ լցուը հինգ-  
շարթի, իսկ այսօր հէնց հինգշարթի է. մի'  
վախիր, հոգեակս, մի' վախիր:

— Ի՞սկ, լսիր', **Պրօդան**, մի՞տքդ է որ իմ  
եղբայր Ատօէնին էլ հէնց հինգշարթի օր սպա-  
նեցին. իսկ նախընթաց զիշերը իմ մայրիկս էլ  
երազումը տեսել էր որ մէկ ատամը հանել է  
և պահում է պատկերի ետեւում. բայց յան-  
կարծ որտեղից որ է մի սեւ ագռաւ ներս է  
թռչում, իւր սուր կտուցով յափշտակում է  
հանած ատամը և անցյատանում է: **Մայրիկս**  
առաւօտեան այս երազը պատմեց տէրտէրին.  
նա էլ ասաց. — ոչի՞նչ աղջեկս, ոչի՞նչ երազը  
սատանայ է. երեւի երեկոյեան պառկելուս Վա-  
տծուն աղօթք չես արել և կամ թէ եթէ  
աղօթք էլ արել ես, մաքուր սրտով չես ա-  
րել. — շատ կարելի է, պատասխանեց մայրս:  
Խսկ մեր ան կից ապրում էր պառաւ Յօ-  
նան, որի համար ասում էին թէ շատ լաւ  
երազ մեկնող է. Վատուած նորա հոգին լու-  
սաւորէ: Խւ աշա — շարունակում է Լատին-  
կան, կանգնելով **Պրօդանի** առաջ առանց իմա-

նալու իրեն արածը — և աշա՛ մայրիկս դիմում  
է նորան և պատմում է իւր տեսած երազը:  
Պառաւ ։ Յօնան գլուխը շարժում և ատամնե-  
րի արանքից ասում է. «Ճեր ազգականներից  
մէկը անպատճառ պիտի մեռնի . . . այո՛, պիտի  
մեռնի . . .» և դու յիշում ես, հէնց նոյն օրը  
երեկոյեան եկան իմաց տուին մեղ եղբօրս ըԱ-  
տօէնի սպանուելու լուրը:

Պրօդանը խորին հառաջանք է արձակում,  
ոտները կարծես դեսնից կտրուում են և նա  
նոտում է:

— Ի՞նչ կայ Պրօդան, գոյնդ թոցնում ես,  
կանչում է Լատինկան:

— Ոչ'նչ հէնց այնպէս, ոտներս փոքր ինչ  
դադրել են, պատասխանում է նա:

— Ես հիմայ կը գնամ, կը կանչում Պրիվա-  
նին և կը տանենք քեզ տուն, ինչպէս երեւում  
է, հիւանդ ես:

— Ո՛չ, հարկաւոր չէ. հէնց այնպէս յան-  
կարծ քէֆս վատացաւ, ասում է նա և տխուր  
հայուածքով նայում իւր երիտասարդ հարսին:  
— Իսո՞ւ ես այդպէս տխուր նայում, սի՝

բելիս, ես քիչ է մնում վախենամ, չէ՛, ես կը  
գնամ մէկին կը կանչեմ:

— Դէ՛հ, գնա՛, ասում է վերջապէս Պրօդա-  
նը, քէֆս իսկ որ շատ վատ է և առանց ու-  
րիշի օգնութեան գժուար թէ կարողանամ գնալ:

— Շատ լաւ, ես այս բոպէիս կը գնամ . . .  
նա չէ կարողանում խօսքը վերջացնել և յան-  
կարծ կանչում է, ձասանը . . . ձասանը դուրս  
է գալիս արտի միջից այնպիսի ահուելի և սար-  
սափելի գէմքով, որ ահաբեկուած Լատինկան  
գրկում է Պրօդանին և աղաղակում է — պաշտ-  
պանի՛ր ինձ Պրօդան, պաշտպանի՛ր ինձ. Ըս-  
տուած իմ, մի՛ տար ինձ այդ անօրէնի ձեռքը.  
Ըստուած իմ, Ըստուած իմ, մի՛ տար ինձ  
նորա ձեռքը:

Պրօդանը վեր է կենում, թուլութիւնը անյ-  
նում է և սպասում է թէ ի՞նչ պիտի ասէ ձասանը:

— Ձա՛ . . . գէտ վոր, ասում է նա, ես քեզ  
չէի՛ ասում որ Լատինկայի վրայ չը համար-  
ձակուես պսակուել: Ուղղ հիմայ Պրիվանը  
գայ ու պաշտպանէ՛ քեզ իւր Լանվանով:

Դ.

Սպասում ենք, սպասում ենք Պրօդանին  
իւր հարսի հետ, բայց նոքա չեն երեւում: Պա-  
թան եփուել և գեռ սառել էլ էր. գենին,  
պանիրը, մեղքը արդէն պատրաստել էինք:  
Սպասում ենք մի ժամ, երկու ժամ, երեք ժամ,  
բայց նոքա չկա՞ն ու չկա՞ն: Հայրիկս դուրս է  
գալիս փողոց և մտիկ է տալիս. զլուխը կոր-  
ցըրածի պէս էլի՛ մտնում է, էլի՛ դուրս է գա-  
լիս: Ա երջապէս նորա էլ համբերութիւնը  
հատնում է և դառնալով Պրիվանին ասում  
է — գնա՞ Պրի՛վան, որդի՛ս, գնա արտը, տես  
ի՞նչ է պատահել որ Պրօդանը այսքան ուշա-  
նում է:

— Ծատ լաւ, հայրի՛կ, ասում է Պրիվանը  
և դուրս է գալիս:

Եմենքս անհամբերութեամբ սպասում ենք  
և աշա ժամանակը անյնում է ու Պրիվանը  
չկայ:

Ժամ ու կէսից յետոյ ներս է մտնում Պր-  
իվանը, գոյնը նետած, յուսահատ և լաց է

լինում: Մենք բոլորս տեղն ու տեղը քարա-  
նում մնում ենք: Նորա գէմքից պարզ երե-  
ւում էր որ մի մեծ դժբաղդութիւն է պա-  
տահէլ: Հայրս, ցնդածի նման ցատկում է ո-  
տի վրայ, մայրս ընկնում է գետին և ակսում  
է լաց լինել:

— Ուր է Պրօդանը, ուր է Լատինկան,  
գոռում ենք ամենքս միաբերան:

— Մեռել են, ասում է Պրիվանը, մեռել  
են . . . և նստումէ թախտի վրայ: Նոցա սպա-  
նել է այն անիծեալ, այն նզովեալ Ելբանացի  
հասանր:

Լացը և աղաղակը երկինք է բարձրանում:  
Հայրս ոչի՞նչ չէ ասում, քայլում է յետ ու ա-  
ռաջ, տխուր, բայց առանց արտասուքի նա-  
յունմ է ըրս կողմը. միայն մագերը փշքաղ-  
ուել դիք դիք էին կանգնել: Խսկ մայրս ուշա-  
թափ փոռւած էր գետնի վրայ: Ըսկ, եղայր-  
ներ, երբէք, երբէք ես չեմ կարող մոռանալ այդ  
օրը: Եւաղակապետը զլուխը քաշ ձգեց, մի  
քանի րոպէ լուռ մնաց և յետոյ դարձեալ շա-  
րունակեց:

— Երբ որ ես սպանում եմ անպաշտպան Թղթին, շատ անգամ պատահօւմէ որ մի ներքին ձայն կշռամբումէ ինձ — անգութիւն, անողորմ Ատօէն, միթէ դու քրիստոնեայ չլիս, ուր է քո քրիստոնէական զգացումք. միթէ այդպէս է սովորեցրել և կրթելքեզ աէլ հայրը: Եւ ես զղջում եմ և իմ ձեռներս թուլանում են: Ի՞այց հէնց որ մաաքերում եմ այդ սարսափելի օրը, ես դառնում եմ կատաղի, անգութիւն, անողորմ և ջարգում ու կոտորում եմ առանց որոշելու . . . :

— Ի՞այց, միթէ Թղթերը ինայո՞ւմ են մեզ, աղաղակեց աւազակների խումբը, միթէ նոքա շան պէս չե՞ն ջարգում, չե՞ն սպանում մեզ: Մենք ինչո՞ւ պէտք է ինայինք ու դժանիք նոցա վրայ. չէ՞ որ նոքա էլ չեն ինայում մեր կանանց, մեր անպաշտպան երեխաներին:

— Ի՞այց, նոքա ի՞նչպէս կարող են ինայել, միթէ նոքա էլ մեղ նման քրիստոնեայնէ՞ր են, միթէ նոքա էլ իմանում են որ Աստուած ուսուցանումէ մեզ համբերել և սիրել մէկմէկու, որ այդ Աստուածը մեռելէ մեզ համար: Կո-

քա առանց նորա էլ պիտի զնան դժոխք, որովհետեւ նոքա Քրիստոսի թշնամիներն են:

— Եթէ նոքա Քրիստոսի թշնամիներն են, հապա ինչո՞ւ է Աստուած մատնել մեզ իւր թշնամիների ձեռքը. Հարցը երիտասարդ աւաղակներից մէկը:

— Աստուած չէ մատնել այլ մենք ինքներս ենք մատնել մեզ մեր թշնամիների ձեռքը. մենք միայն մեր թուլութիւնների պատիմն ենք կրում:

— Ի՞այց, միթէ երկար պէ՞տք է տեսէ այդ պատիմք:

— Ո՛չ շուտով շատ շուտով նա վերջ կըստանայ: Մի Թղթերը ինձ պատմում էր որ նոցա գրքումը գրուած է թէ՛ տասը տարի էլ Թղթերը պէտք է թագաւորութիւն անեն. իսկ այնուհետեւ մենք պիտի ազատունք և պիտի ունենանք մեր սեփական թագաւորը:

— Այդ ի՞նչպէս, Ատօէն, միթէ Թղթերը համաձայն են յետ տալ մեզ մեր թագաւորութիւնը:

— Ո՛չ տղե՛րք, նոքա համաձայն չեն, այլ

մենք ինքններս պէտք է յետ առնենք, ինքներս  
“Նոքա ասում են», «մենք ձեր թագաւորութիւն-  
նը արիւնով վերցրինք, արիւնով էլ յետ կը  
տանք»: Հարկաւոր է պատերազմ, եղբայրներս,  
պատերազմ, կոիւ և արիւնչեղութիւն:

— Իսկ առաջ մենք թագաւորներ ունեցե՞ր  
ենք, Ստօքն:

— Ի՞նչպէս չէ. մենք ունեցել ենք բարի և  
քաջ թագաւորներ. բայց, մենք նոցա չե՞նք  
հնազանդել Աստծուն չե՞նք սիրել. այս պատ-  
ճառով էլ նա ուղարկել է Թարքերին մեղ  
պատժելու համար:

— Բայց, եթէ մենք պատերազմենք, եթէ  
սիրենք Աստծուն, այն ժամանակ նա մեր թա-  
գաւորութիւնը մեղի էլի յե՞տ կը տայ— առան-  
ձին ոգեւորութեամբ ձայն բարձրացրեց խումբը:

— Եյ՛, ի հարկէ յետ կը տայ, անպատճառ  
յետ կը տայ և մենք կը լինենք ազատ, բոլո-  
րովին ազատ. մենք կունենանք մեր բարի փա-  
շաները, մեր բարի հասքները. միայն թէ ա-  
զօթք արէք, եղբէք քաջ ու աներկիւղ և ամե-  
նեւին մի' վախենաք Թարքերից . . . :

— Քաջ կը լինենք, Ստօքն, քաջ և աներ-  
կիւղ կը լինենք: Բայց դու այն ասա՝ Պրօդա-  
նի մահուան վրայ Հասանին դատապարտեցի՞ն  
թէ ոչ:


Ստօքնը շարունակեց:

— Մայրս վշտի և տրտմութեան տակ ընկ-  
ճուած երկար ժամանակ ուշագնաց փոռուած էր  
գետնի վրայ. Հայրս՝ Հարբածինմանյետ ու առաջ  
էր գնում և անդադար կրկնում էր — Պօդան,  
իմ սիրելի որդի Պրօդան, մենք կորցրինք քեզ,  
մենք զբկուեցինք քեզանից: Ամբողջ մի ժամ  
մենք գտնուում էինք այդ սարսափելի դրութեան  
մէջ: Մէկ էլ յանկարծ դռները բացուեցին և  
ներս բերին Պրօդանին, Լատինկային և մի ու-  
րիշ վիրաւոր բայց դու կենդանի Վլբանա-  
ցուն: Վղդականներս և հարեւաններս հաւաք-  
ուել վիրցրել էին նոցա և իրենց ձևների վր-  
այ բերել էին տուն: Երիտասարդ նորապը-  
սակներին վերջապէս հազցրին և իրալու  
կողքին գրին ուղանների վրայ: Մէկ էլ ներս  
մտան ծերունի Ալբան և իւր պառաւ կինը,  
մի պինդ ծուացին և ընկան իրենց աղջկայ

վրայ: Այստեղ հայրա էլ արդէն չը կարողացաւ համբերել և սկսեց լաց լինել մայրա էլ ուշքի եկաւ, կանգնեց ուրքի և ընկնելով Պլոտանի վրայ համբուրում էր և լալիս: Կառուած իմ, ի՞նչպէս էր լաց լինում նա. Հենց իմանաս մեռեներն էլ այդ րոպէնն կը շարժեին, քարերն էլ արտասուք կը թափէին: Մայրա լալիս էր, մազերը փետառում էր և ցած, հագիւ հասկանալի ձայնով հեծեծում էր, «որդեհակ իմ, որդեհակ իմ, նորա համար ես քեզ անուցի, նորա համար ես քեզ իմ աչքի լցուի պէս պահպանեցի որ վերջը այդպէս իրեն, յափշտակի՞ն քեզ ինձանից... որդեհակ, իմ սիրելի՝ որդեհակ, ինչո՞ւ ես քեզանից առաջ չը մտայ գերեզման: Պրօդան, իմ քաղցրի՛կ որդի Պրօդան, նայի՛ր ինձ, նայի՛ր վշտացած մօրդ վրայ, միխթարի՛ր ինձ: Դու էիր իմ բոլոր յցար, դո՞ւ. Էիր իմ բոլոր գանձը և հարսառութիւնը. անիծեալ օձերը խլեցին քեզ ինձանից»: Իսկ ծերունի Արևան և իւր պառաւ կինը երկու կողմից զրկում էին Լատինկային և գառն—գառն արտասուքներով ողղողում նո-

րա անշնչացած գիակը . . . : Պրօդանը մեռած տեղն էլ գեղեցիկ էր, թէև գցնը բոլորովին նետած. իսկ հարսը պյուղէս գեղեցկացել այնպէս սիրունացել էր որ կարծես երկնային հըրեշտակ լինէր: Վիրաւորուած Ալբանացին, որի վրայ մինչեւ այդ ժամանակ ո՛չ ոք ուշագրութիւն չէր գարձրել ձեռքով կանչեց իւր մօտ մեր գիւղի քահանային և խնդրեց որ ականջ գնէ նորան: Տէր Տրէպօն և մեր ծերունի հարեւաններից երեք—ըրսը ըրջապատեցին նորան որ տեսնեն թէ ի՞նչ է ուզում ասել: «Նա սկսեց հետեւեալ կերպով. «Երբ Պրօդանը գուրս եկաւ տնից և ուղեւորուեց արտը ձասանը կանչեց ինձ և ասաց. լսի՛ր, Մէմիշ եթէ դու ինձ հետ կը գաս Պրօդանին սպանելու, ես քեզ հինգ հարիւր լուրջը կը տամ իսկ եթէ կալողանաս Լատինկային յափշտակել այն ժամանակ հազար կը տամ»:

— «Ու ո՛չ թէ հազար այլ մի լուրջը էլ չունես, պատասխանեցի ես նորան ծիծագելով: — Ի՞նչպէս չունեմ, Մէմիշ, ես հենց այ-



սօր սպանեցի մի վաճառականի և վերցրի նորա երկու հաղար պարզութ:

Ես հաւատացի ձասանին, համոզուած լինելով որ նորա ձեռքից ամեն բան վէր կը դայ. իսկ ևս՝ մի աղքատ մարդ եմ և հաղար պարզութ ինձ համար մի կատարեալ դանձ է: Ուտածեցի որ այդ գումարով կարող եմ վերադառնալ Ալբանիա, պսակուել և խաղաղ ապրել. մտածեցի և համաձայնեցի: Երբ հասանք արտը, պառկեցինք ցորենի հասկերի տակ, որտեղից պարզ տեսնում էինք ի՞նչ որ նոքա անում կամ խօսում էին: Ո՞էմիշը այնուշեակ պատմեց թէ նոքա ի՞նչ էին խօսել երազի մասին, ի՞նչպէս Լատինկան երգել եր և շարունակեց: Երբոր Պրօդանը ընկաւ ձասանի ոտները և խնդրում եր որ խնայէ նորան, ձասանը հանեց դաշջնը և խրեց նորա կողը: Պրօդանը ընկաւ. Լատինկան վազեց նորա վրայ և նա նորան համբուրելով, ասաց, — մը նաս բարով, մենք այնտեղ կը տեսնուինք —: Իսկ ձասանը քաշ եր տալիս Լատինկային և ասում էր, «գնա՞նք, Լատինկայ, ևս քեզ կը

վերցնեմ և կը տանեմ իմ հայրենիքը»: Լատինկան պինդ կպել եր Պրօդանին, որը նոյնպէս բոնել եր նորան և ասում եր «աւելի լաւ է, մեռիր, Լատինկայ, մեռի՛ր և մի՛ ընկենիր այդ անօրէնի ձեռքը»: Լատինկան սկսեց աղաղակել լաց լինել իսկ ձասանը դառնալով ինձ ասում էր, «բռնի՛ր նորան, Ո՞էմիշ և օգնի՛ր ինձ նորան կապելու, բերանը թաշկինակով կալ և մի՛ թող որ ձայն հանէ»: Բայց հէնց որ մօտեցայ նորան, նա մանգաղով յարձակուեց և խփեց ուղեղ այս ուսիսյիետոյ միենցն մանգաղը ձեռին յարձակուեց ձասանի վրայ. բայց նա թոյլ չտուեց մօտենալ, արժանակը հանեց և խփեց նորա կուրծքին: Լատինկան թուլացաւ, ընկաւ Պրօդանի վրայ և զրկելով նորան այսքանը միայն կարողացաւ արտասանել — գնա՞նք այժմ միասին երկինք, գնա՞նք սի՛րելիս :

Պրօդանը նոյնպէս զրկեց Լատինկային և երկուսն էլ հոգիները աւանդեցին: Ես մահացու վէրք չեի սաացել և դեռ կանգնած էի ոտի վրայ. ձասանը մօտեցաւ ինձ և ասաց,

«Դու վիրաւորուած ես, Մէմիշը և չես կարող ինձ հետ փախչել, քեզ կը բռնեն և դու կարող ես ինձ մատնել»:

— Ո՞չ ես դեռ կարող եմ փախչել ինձ չեն կարող բռնել պատասխանեցի ես, միայն թէ դու հանի՞ր հինգ հարիւր ռո-րո-րո:

— Ահա քեզ հինգ հարիւր ռո-րո-րո ասաց ձասանը և դաշոյնը խրեց աջ կողս ու հեռացաւ. ես ընկայ . . . : Մէմիշը էլ չկարողացաւ շարունակել արիւնը դուրս ցայտեց նորա բերանից, նա լոեց և մի քանի րոպէից յետոյ դարձեալ շարունակեց. — Ռու, ներեցէք ինձ, ներեցէք, ես այնքան տարի վայելել եմ ձեր աղն ու հացը և հինգ այդ է պատճառը որ ապերախտ գտնուեցայ ձեր մօտ . . . վերջին խօսքը մեռաւ նորա շրթունքների մէջ և մեղաւոր հոգին դուրս թռաւ նորա մարմիից:

Մէմիշը ձասանից առաջ մեր գիւղի կարտան էր (պահապան): Պրօդանը և հայրամիշտ նորան պահուամ և կերակրուամ էին. շոր, կօշիկ, ծխախոտ էին տալիս. մայրս շատ անգամ տալիս էր նորան մեր շապիկները, դու-

լաբները, երեսարբիչները, և այլն . . . բայց դիտէք ի՞նչ կայ, տղե՛րք, ասած է թէ « Թա՞ր-ժի՞ն ո՞ր անդադ պալիս ես, նա հոգինդ էլ է ուղա- սաւնել»: Թուլրիքը՝ շանը երբէ՛ք չէ սպանում, իսկ Քրիստոնէին սպանելը՝ նորա համար ու մինչ է. քրիստոնեան նորա աչքում շնից վատ է: Ահա տղե՛րք, թէ ի՞նչպիսի ազգի ձեռք մատնել է մեզ Աստուած մեր մեղքերի համար . . . ախ Աստուած, ախ Ա. Գէորգ, միթէ էլի շատ պէտք է համբերենք այդ անօրէնների ձեռքում . . . : Այս ասելով աւագակապետը բարձրացրեց աչքերը դէպի երկինք և արտասուքի կաթիլները սկսեցին զլուուել նորա արեւակէզ դէմքի վրայ: Նա աղօթում էր. խումբը երկիւղաձութեամբ զլուխը քաշ ձըգած լուում էր: Յանկարծ նա էլի կենդանացաւ, երբ աւագակապետը ձայնը բարձրացնելով բացագանչեց վրէ՛ժ, վրէ՛ժ, տղե՛րք, մեք պէտք է վրէ՛ժ ինդրենք:

— Վ արէ՛ժ, աղաղակեց խումբը միարեւան և ատելութեան կայծը փայլատակեց նոցա աչքերում: Նսկ դու շարունակի՞ր, Ատօնն, պատ-

մի՛ր տեսնենք ի՞նչպէս վերջացաւ գործը, խընդիրեցին աւազակները վայրկենական լոռութիւնից յետոյ:

— Ո՞չ, թողէք հանգստանամ, վաղը առաւօտ միտս ձգեցէք, ևս էլի կը պատմեմ: Խումբը վեր կեցաւ և ցրուեց: Ո՞ր գնաց հանգըստանալու, ո՞րը պահպանութիւն անելու, ո՞րն էլ հովիւների մօտից կիրակուր բերելու: Ալոռութիւնը տիրապետեց չորս կողմ:

—∞—

Ե.

Ըռաւօտ է. դժուար է մինչեւ անդամ երեւակայել գարնանային առաւօտը Ի՞ալկանեան լեռների վրայ. մանաւանդ այն լերան վրայ, որ անուանուումէ Ո՞րժան: Ներքեւում, ձիր աչքի առաջ տարածուումէ Պիրօտ քաղաքը ծաղիկների և վարդերի մէջ թաղուած: Խրեսում է Նիշավայ գետը իւր կանաչ ափերով, որը օձի պէս ուրու մօլոր օղակներով մանումէ նեղ կիրճերի մէջ: Աապցյա և հանդարս ջուրը

լուանումէ եղերքը, որը սուզուումէ յասմիկների, խնձորենիների, տանձենիների և շլորի ծառերի թաւ ստուերների մէջ: Մեղմ և անուշ աղաղակով խոխոջում են լեռնային վրտակները. իսկ հեռուում, փոքրիկ լճակների մէջ հաւաքուած անձրեւային ջուրը փայլում է ջինջ հայելու նման և հաղարաւոր ու բիւրաւոր թռչունները ճռուողում են նոցա կանաչ պապղուն ափերում: Աարի հէնց ոտների տակ տարածուում են անվերջ վարդաստանները, որոնք սփոռում են երկնային անուշահոտութիւն. իսկ աղջկերքը զարդարելով իրենց սիրուն գլուխները ծաղկեայ պասկներով և իրենց մայլենի երգելը երգելով վարդ են ժողովում, որից յետոյ հանում են իւղ ու վաճառում են արեւելքում և արեւմուտքում: Վայեն տեղ գեղգեղում են սոխակները իրենց քաղցր դայլայլեկները: Պիւղական աղջեկը բահը ուսմին շտապում է այգին խաղողի վաղերը բահելու. երիտասարդները ու պատանիները իրենց չալ եղները լծած գնում են արտը հերկելու. հովիւր իւր առաջը արած քշում՝

է ոչխարները դէպի արօտատեղին, նորա ետեւից վազում է շունը և խոջոր աչքերով նայում է իւր տիրոջ վրայ: Փոքրիկ գառները ուրախ ուրախ խազումու թոշկումնեն. պրզտիկ այծերը կռուռումնեն իրենց մանր եղջեւրներով և սատանի ձուտերի պէս բարձրանում ժայռերի վրայ. գորտերը երգում են իրենց սովորական նուագը: Դարձէ՛ք դէպի ձախ, այնտեղ տարածուռում են լեռների շղթայները, իւրեանց լերկ, ձիւնապատ գագաթներով, որոնք բարձրանում է կորչում, անցայտանում են ամպերի մէջ: Ո՞չ մի կինդանի չէ երեւում այնտեղ բացի գորշ արծուից՝ որը ցածանում, զննում է քարերը ու ժայռերը և մոածում է թէ որտեղ պահուէ և դիշատէ իւր բռնածորսին — արագավազ նապաստակին կամ վախկոտ գառնուկին: Զածում սփռուռում են թթենու մանր թփերը, աւելի ցած կաղնիների հին անտառները, անանցանելի թաւ թփերով: Դէպի աջ՝ ձեր կողքում իշնուվ թփերի վրայ և ողբալով իրենց գերի եղած հայրենիքը: Նոքասպասում են այն զօրաւոր ձայնին՝ որ մի օր կը կանչէ նորանց այդ փախստատեղիներից և

և գետերը իրենց բարձր սպիտակ և կապըտ եղելիքներով: Աւելի հեռուն տարածուռում է խաւարի թագաւորութիւնը — բարձր մութանտառը իւր ահռելի ժայռերով և անյատակ անդունդներով. անտառի միջով անցնում է մի նեղ փոքրիկ ձանապարհ, որի մի կողմը խորխորածն է, միւս կողմը ժայռը. մէկ էլ յանկարծ մի նոր լեռ փակում է ձեր ձանապարհը և դուք մնում էք մի մութ, խոնաւ կրծի մէջ, ուր ոչի՞նչ չէ երեւում, բացի խաւարը և արհաւելիքը: Նշան այդ անանցանելի լեռների մէջ են ապաստանում Բուլզար, Բոսնիացի և Ալբանացի աւազակների խմբերը: Այստեղ կարելի է ամբողջ տարիներ, մինչեւ անդամ ամբողջ գարեր ապրել, և ինքը սատանան չէ կարող խմանալ տեղդ: Այստեղ են քաշուռում բոլոր հալածեալները, բոլոր տառապեալները, բոլոր աղատութիւն սիրողները, և ապրում են այնտեղ յարձակվելով Թրքերի վրայ և ողբալով իրենց գերի եղած հայրենիքը: Նոքասպասում են այն զօրաւոր ձայնին՝ որ մի օր կը կանչէ նորանց այդ փախստատեղիներից և

ազատութեան հետ միասին կը վերադարձնէ  
նոցա խաղաղութիւն և երջանկութիւն . . . :

Դարձրէք այժմ աչենիդ դէպի յետ, այս-  
տեղ արդէն բոլորովին ուրիշ պատկեր է ներ-  
կայանում ձեր առաջ: Անդարձակ անսահման  
դաշտավայրեր, որոնց վրայ սփռուած են քա-  
ղաքներ, գիւղեր, անտառներ. իսկ հեռուում  
տարածում է մի երկայն լուսաւոր գօտի,  
որը արեգակի անդրագալարձող ճառագայթներից  
փայլում, շողշողում է ինչպէս ադամանդ: Եյդ  
Դանուբ գետն է: Իսկ աւելի հեռուն այլ եւս  
ոչինչ երեւում, ամեն բան կորչում, անյայ-  
տանում է մոայլ խաւարի մէջ . . . :

Եւազակների խումբը կրկին ժողովուեց կը-  
բակի շուրջը, ուր շամփուրի վրայ խորովուում  
էր մի ամբողջ ոչխար. մի գեղեցկադէմ աւա-  
զակ շուռ էր տալիս շամփուրը երբեմն եր-  
բեմն մատով տնտղում էր միսը և սկսում էր  
լիզել մատի ծայրելը:

— Ասեցէք, տղե՛րք, ես դեռ բոլորը չեմ  
պատմել վերջացրել ասում էր աւազակապե-  
տը. ականջ դրէք թէ յետոյ ի՞նչ եղաւ: Նո-

րապսակներին տարինք թաղելու: Խեղձ մայրո  
բոնել էր Պրօդանի գլխից և աղաղակում էր  
. . . Նորա դէմքը սարսափելի էր այդ ժամա-  
նակ, խեղձը անդադար վազվզում և լաց էր  
լինում. . . Պը լուխը բաց, մազերը ուսերի վրայ  
թափած, որոնք կարծես այդ երկու օրուայ  
մէջ սպիտակել էին . . . Վերջապէս դիակները  
դրինք գերեզմանում: բայց երբ տէրտէրը սկսեց  
կարդալ «Ճող էիր անդրէն և ի հող դարձ-  
ցիս», մայրս իրեն ձգեց գերեզմանի մէջ. նորան  
հանեցինք. բայց նա սկսեց յանկարծ կատաղի  
կերպով ծիծաղել. . . խեղձ կին . . . նա արդէն  
խելքը կորուսել էր . . . :

—∞—

### Օ.

Վեց օր անցած քաղաքի փաշան ուղարկեց  
պալառներ (ժանդարմ), որոնք ճասանին բոնե-  
ցին, կապեցին և տարին քաղաք: Տարին նաև  
հօրս, Պրիվանին և մի քանի ուրիշներին իբ-  
րեւ վկայ: Երեք չորս օրից յետոյ նոքա դար-  
ձեալ վերադարձան յետ: Փաշան աւելորդ էր  
համարել մինչեւ անդամ խօսել նոցա հետ:

Վաղաքում մնաց միայն Պրիվանը: Մի օր,  
երկու օր հարցաքննում են նորան յետոյ նրա-  
տեցնում են փոսի մէջ բայց թէ ինչու, այդ  
մասին ոչինչ չեն ասում: Մի ամսից յետոյ  
վերջապէս նորան հանում են փոսից և բերում  
են գագագի առաջ. գագագի նորան հարցնում է,  
— Ասա՛, գէա՛լուր, ո՞վ է սպանել Մէմիշին.  
իսկ Պրօդանի մասին մի խօսք էլ չէ՛ ասում:  
— Ճասանը, պատասխանում է Պրիվանը:  
— Վակայներ կա՞ն:  
— Կա՞ն:  
— Ո՞վ են ձեր վկայները:  
— Մեր զիւղի քահանայն, ծերունի Մի-  
տօն, ծերունի Պէտրօն և ուզիները:  
— Իսկ ուզդափառ Ծուլք վկայ չունէ՞ք:  
— Ո՞չ:  
— Իսկ ես ունիմ վկայ որ դու ես սպանել  
Մէմիշին:  
— Եյդ ո՞վ է, թո՞ղ իմ առաջիս վկայու-  
թիւն տայ:  
Դուքս է գալիս մի պատառոտած, ճռդոտ-  
ուած Ալեանացի. գագագի նորան հարցնում է,

— Ա՞է հմէդ, գու տեսել ես որ Պրիվանն  
է սպանել Մէմիշին:  
— Տեսել եմ ասում է նա:  
— Տեսնում ես, գէա՛լուր, ուրեմն գու ինձ խա-  
բում ես. խօստովանի՛ր, թէչէ՛ կախել կը տամքեզ:  
— Թէկուղ թո՞ղ այլն ինձ կրակի վրայ,  
թէկուղ փայտիցը կախ անեն ինձ, ես ամեն-  
քին կասեմ որ այդպէս—այդպէս է եղել գործը.  
միեւնյնը կարող են հաստատել նաեւ բոլորը,  
որոնք լսել են թէ ի՞նչպէս Մէմիշը ինքը խօս-  
տովանեց մեր առաջ. ամենքը գիտեն թէ ո՞վ  
է արդար և ո՞վ է մեղաւոր:  
— Օռունկ չոգի՛ր, անպիտան շուն, գեռ հա-  
մարձակում էլ ես խօսել գորում է բարկա-  
ցած գագագի և կանչելով զինուորներին հրա-  
մայում է որ դուրս տանեն Պրիվանին և հա-  
րկու փայտի հարուած տան ոտներին:  
Խեղճ Պրիվանին հարուածում են և կրկին  
ձգում են փոսը: Միւս օրը գագագին էլի իւր առաջն  
է բերել տալիս նորան և ժպտալով ասում է:  
— Ճը, գէա՛լուր, ի՞նչպէս ես զգում քեզ,  
ի՞նչպէս է առողջութիւնդ: Ես քեզ չասեցի՝

որ լսելոք լինես, ճշմարիտը խոստովանես: Դէ՛հ,  
էլ յամառութիւն չանես, ճշմարիտը խոստովանի՛ր:

Պրիվանը մնումէ լուռ և չէ պատասխանում:  
— Երեւի էլի ես կամենում ծեծուել ան-  
պիտան գեա՛լու, որոտում է գագալն և հրա-  
մայում է նորից հարուածել:

Երբ այդ բոլորի համբաւը հասնումէ մեզ,  
ամենքս վեր ենք կենում և Ճանապարհ ենք  
ընկնում քաղաք, փաշայի մօտ: Բայց փաշան  
սառն կերպով պատասխանում է. «ի՞նչ անեմ,  
քանի որ Մուսուլման վկայ չունէք, ի՞նչ կա-  
րող եմ անել կամ, ես ի՞նչ մեղաւոր եմ, օ-  
րէնքը այդպէս է»: Յիսուն Քրիստոնեայ վկայ  
առանց մի թառլք վկայի ոչի՞նչ նշանակու-  
թիւն չունի: Բանը սորանով էլ վերջացաւ:

Երեք ամսից յետոյ վերջապէս դատաստան  
կտրեցին և վճռեցին Պրիվանին կախել մեծ  
կամրջի պլխին, նորա համար որ իբր թէ ու-  
ղեղը չէր խոստովանել: Պատժի ժամանակ ես  
այդտեղ էի. իմ աչքերս փայլատակեցին, ա-  
քիւնս եփ եկաւ ու խռովուեց, ես բարձր ա-

զազակեցի, «մեռի՛ր, Պրի՛վան, մեռի՛ր, դու-  
էլ եղի՛ր անթիւ զոհերից մէկը բայց ես եր-  
գուռում եմ ահեղ Աստուծոյ առաջ որ ան-  
պատճառ կը հանեմ քո մահուանդ վրէժը»  
Ես փախայ, մի քանի ժամաներ ընկան ետե-  
լիցս, բայց ես արդէն հեռու էի . . . :

Տեսնում էք, տղե՛րք, իմ մազերս արդէն  
սպիտակել և ես ծերացել եմ: բայց ես ծեր  
եմ ոչ թէ տարիքով՝ այլ հոգեկան տանջանք-  
ներով: Ես ընդ ամենը երեսուն և ութ տա-  
րեկան եմ: սակայն ամենքդ արդէն ինձ ծերու-  
նի էք անուանում: Երդ՝ ահա այն վիշտը, որ  
ինձ այդ օրին է հասցրել: Եւ թող ես գեռ  
շատ ու շատ տարիներ ծերանամ ու զառա-  
մեմ: բայց երբ կը գայ այն ժամանակը, երբ կը  
համնի այն օրը, երբ այդ հարկաւոր կը լինի,  
ես դարձեալ կը նորանամ, երիտասարդ արիւնը  
դարձեալ կը վաղէ իմ երակներիս մէջ և դուք  
ինձ չէք ճանաչիլ: Դուք զարմացած իրար կը  
հարցնեք, միթէ ծերունի Ստօէնն է սա. ի՞նչ  
հիանալի ջարդում, փշումէ նա երիտասարդ  
թշնամիներին . . . :

Հասանին մի տարուց յետոյ բայ թողեցին.  
և դուք յիշո՞ւմ էք, տղե՞րք, այն Ալբանացուն՝  
որին սպանեցինք Տրիուշ սարի վրայ. դուք  
յիշո՞ւմ էք ի՞նչպէս չարանում, բարկանում էի  
նորա վրայ. ի՞նչպէս ես ինքս խողխողում էի  
նորան և դուք զարմանում էիք՝ իմանալով որ  
մինչեւ այդ օրը՝ ես երբէք ո՛չ մի տեղ և ո՛չ  
մի մարդ չէի սպանել: Այդ Ալբանացին հա-  
սանն էր: Ի՞այց նորանից յետոյ գեռ երեք հո-  
գի էլ սպասում են մեզ. դուք նոցա ձանա-  
չում էք — դոքա են թուրք զինուորը, թուրք  
դատին և թուրք փաշան . . . :

Վւազակապեար լոեց. կատաղած խումբը  
ոտի վեր կեցաւ և գաշցննելը մերկացնելով  
բարձրաձայն գուեց.

— Գնա՞նք, Ատօ՞քն, գնա՞նք. առաջնորդի՞ր  
մեղ և թէկուզ դժոխք էլ տանես, մենք կը  
դանք քո ետեւից:

### ՎԵՐ:

Дозволено цензурою. С.-Петербургъ, 5 января 1887 года.

Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).

«Ազգային գրադարան



NL0153080

